


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 ծր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Իրիւնքի մեկ ծրարով
Տարեկան . . 14 ծր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տոլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանուցանում տուող
20 ամսեայով



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ձ Փ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Ver. Père G. Kalemkarian Michitaris
tengaste No. 4
Vienne

Հ Ա Ս Ց Է

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)
Редакция
на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България)
Դրամատիկ ևս
չեն տրուիր

ՉԸ ՎՃԱՐՈՂՆԵՐՈՒՆ

Մեր այն բաժանորդները որոնք ցարդ իրենց բաժնեգրիները չեն վճարած, թող հաճին քնն փոյրդ դրել:

ԹՈՒՐԲԻԱ

Պոլսոյ մէջ բոլոր մեծ պետութեանց պետներն կամ գործակալները նկատողութեան առին Մակեդոնիոյ համար վերջերս Բ. Դրան հրատարակած բարենորոգմանց ծրագիրը: Յայտնի է որ եւրոպական դիւանագիտութիւնը բաւական դժուարին դիրքի մը մէջ կը գտնուէր:

Եթէ անոր համար դժուար կուգար իր հաւանութեամբը կերպով մը չը կնքել այնպիսի միջոցներ, որոնք որքան ալ անկատար ու անբաւական ըլլան, դարձեալ, իրենց ամբողջութեամբ մէջ Մակեդոնիոյ տխուր վիճակին պաշտօնական խոստովանութիւնը կը ցուցնեն ու դէպի բարեկարգութեանց առաջին քայլի մը պատրանքը կուտան — միւս կողմէ անկարելի ալ էր որ պետութիւնները յայտնէին գոհունակութիւն մը զոր չեն կարող ունենալ ու այսքան մասնակի թերհաշիւի մը համար անգործագիր մը տալին: Այս պատճառաւ, անոնք ջանացին մէկ կողմէ բարեկարգութեանց արձանագրութիւնը նկատի առնել զոյր անհրաժեշտ պահանջներով ու վերապահութիւններով, ու միւս կողմէ չբաւականանալ այս լիզուով միայն — Եպարգոսին, արտաքին գործերու նախարարին ու Դրան խօսելու, այլ նաեւ պատեհութեան օգտուելու կամ պատեհութիւնը ստեղծելու այս առթիւ Սուլթանին ալ խօսելու և անոր ուշադրութիւնը հրաւիրելու խնդրոյն ծանութեանը վրայ:

Պալքանեան թերակղզիի գործերուն մօտէն հետեւողները նոյն կարծիքը ունին նոր հրամանագիրներուն երեւութական նկարագրին, չըսելու համար ցուցմունքին նկատ:

Սակայն, չափ մը տեղեկեալի նպատակաւ վկայութիւններ ընդունուեցան այն ձրկութեամբ տրուած պաշտօնատարնէն, զու վրայ, որոնց մին իբր բարեկարգութեանց քննիչ ու միւս իբր գերագոյն յանձնաժողովոյնախագահ, ձեռք առնուած միջոցները քննելու են ու պիտի կրնան մեծապէս նպաստել այդ միջոցներուն դործնական տրդիւնք մը տալու կամ զլանալու:

Ապաւիլ Համիտի տիրապետութեան ներքեւ օսմանեան կառավարական ու վարչական պաշտօնէութիւնը շատ հարուստ չէ — ու ասոր պատճառը կայ — երբեմնի Ալիներու, Ֆուտներու, Միտհաններու պէս քաղաքագետներ ունենալու մէջ, կամ նոյն իսկ այսքան դժուար պայմաններու տակ վստահութեան արժանի ու պատուաւորապէս կառավարելու պաշտօնը լրացնող պաշտօնատարներու գտնուելուն մէջ:

Մնաց որ, փորձառութիւնը հոս է ապացուցանելու համար թէ էականը փրկելիներ, հանճարեղ մարդեր կամ անբաղդատելի առաքելութիւններ գտնելու վրայ ըլլալէ աւելի՝ կը կայանայ վաղիներու ու անոնց կառավարած բնաշնչութեանց՝ անկողմակալ ընտրութիւն մը, ապահով գոյութիւն մը ու հաստատ դաշինք մը երաշխաւորելու մէջ: Ժամանակին Եւրոպան այս կէտը հաշուի առաւ, ըլլայ իրականանի մէջ, կամ երբ առաւօտ մը արեւելեան Բուլղարիոյ իր նախկին ձեւովը կազմակերպեց:

Այսօր աւելի քան բնաւ ամենուն աչքին յայտնի կերեւալ թէ Մակեդոնիոյ ամէն բանէ տալ պէտք է ընդհանուր կառավարիչ մը որ իր պաշտօնին մեծութեան գիտակցութիւնը ունենայ, պետութեանց վստահութիւնը վայելէ, արքունական կամ պալատական մեքենայութիւններէ իսկապէս զերծ ըլլայ, ու իր ապագային վրայ արդար հաւատքով մը, նահանգին շահերուն նուիրուելու վիճակին մէջ գտնուի: Որքան ատեն որ այս նախնական բարենորոգումը չիրականացուի, մնացեալը պիտի ըլլայ միայն երբեք մը, առանց հաստատ հիմի, Եւրոպայի առաջին բնական ըմբռնումը մատնադրելու: Սակայն, ինչպէս որ Մակեդոնիոյ իրականութիւնը իրականութեամբ մը, ուշադրութեամբ մը, ու կարող չէ ալ իրմէ ծածկել թէ, Եւրոպայի մէջ դեպքանքներու կամ գործակալատարներու մեղմ խօսակցութեանց կամ Բ. Դրան առաջին անգամ այնքան չափաւոր դիտողութեանց ետին կայ... Պեռ լինի դաշնագրին բնագիրը ու Մակեդոնիոյ վերաբերող տիրական յօդուածը — ինչպէս որ Մակեդոնիոյ յատուկ խնդրին ետին կայ

նախ, մնացեալը պիտի ըլլայ միայն երբեք մը, առանց հաստատ հիմի, Եւրոպայի առաջին բնական ըմբռնումը մատնադրելու: Սակայն, ինչպէս որ Մակեդոնիոյ իրականութիւնը իրականութեամբ մը, ուշադրութեամբ մը, ու կարողութեամբ մը:

Թուրքիան տկար ջանք մը ըրաւ քրիստոնեայ մեծամասնութիւնը գոհացնելու — թուրքի վրայ — խառն դատարաններ կազմելով:

Կարեւոր է մանաւանդ ուստի կան իրենց մէջ, այսինքն ամէն վայրկեան, բռնակալի դեր խաղացող այս կազմակերպութեան մէջ ներմուծել ու միւս կողմէ մասնակցութիւնը: Որքան ատեն որ հանրային զօրութեան մեծանորհրդը խառնութեան աղանդաւորներուն յանձնուի, Մակեդոնիոյ քրիստոնեաները ոչ ապահովութիւն, ոչ արդարութիւն, ոչ խաղաղութիւն պիտի ունենան:

Սուլթանը զարմացումով ու անձկութեամբ ստիպաւ իր այս անգամ ամբողջ Եւրոպան իր գէմը կը ցցուէր, անշուշտ ոչ թէ հաւատքով, ու նոյնանման դիմումներու կերպարանքին տակ, ալ յաջորդական համերաշխ դիտողութեանց ձեւով: Եթէ անգամ մըն ալ կարծած եղաւ թէ Գերմանիան, սուրաց ուսմանքներ ձեռք ձգելու միայն ինքզինքը տուած, անոնցմէ կանչատուէր ու իր գործակցութիւնը կը զլանար խնդրով որ ցամաքային խաղաղութիւնը նուազ չը շահագրգռեր որքան մարդկութիւնը, անշուշտ իր պատրանքը ճանչցած ըլլալու է:

Ու կարող չէ ալ իրմէ ծածկել թէ, Եւրոպայի մէջ դեպքանքներու կամ գործակալատարներու մեղմ խօսակցութեանց կամ Բ. Դրան առաջին անգամ այնքան չափաւոր դիտողութեանց ետին կայ... Պեռ լինի դաշնագրին բնագիրը ու Մակեդոնիոյ վերաբերող տիրական յօդուածը — ինչպէս որ Մակեդոնիոյ յատուկ խնդրին ետին կայ

Հայաստանի ու բոլանդակ Արեւելքի ոչ նուազ ստիպողական խնդիրը:
(Թան)

ՕՐՈՒՍԱՆ ԲԱՂԱԲԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ

ՍՊԱՆԻԱ

Անցեալ շաբաթու մէջ, այն միջոցին իսկ երբ Ջայմիսի դահլիճը իր հրաժարականը Յունաստանի թագաւորին կը ներկայացընէր, Սպանիոյ մէջ ալ նախարարական տաքնապ մը տեղի կուտենար:

Սպանիոյ նախարարապետը, Մ. Սակաստա, խորհրդարանին մէջ իր կուսակիցներուն անվերջ դասալքութիւններէն տկարացած, յաղթահարուած ու բացարձակ անզօրութեան մատնուած, վերջը վերջը Ալֆոնս ԺԳ. թագաւորին իր նախագահած դահլիճին հրաժարականը տալ հարկադրուեցաւ: Սպանիոյ ամենէն վաղեմի, ամենէն հանրաժանութ քաղաքագէտներէն մէկը եղած է Մ. Սակաստա՝ որ երկար տարիներ ի վեր Սպանիական քորդեղներու (խորհրդարան) մէջ ազատական հատուածներու կուսակցապետութիւնը կը վարէ. անոր իշխանութեան վրայ գտնուած ատենն էր որ գոյութիւն գտաւ հինգ տարի առաջ Սպանիոյ-Ամերիկեան պատերազմը, որուն ելքը մահացու վերջին հարուածը պիտի ապր Սպանիոյ երբեմնի գաղթային կայսրութեան մնացորդներուն:

Անկէ ի վեր, պահպանողական տարրերու առջեւ անգամ մը տեղի տալէ ետք, Մ. Սակաստա վերադարձաւ ինքնավար թագուհիին կողմէ Սպանիոյ ճակատագիրը վարելու կոչուեցաւ: Բայց, հակառակ գերմարդկային ջանքերու, հակառակ նախարարական կրկնակի փոփոխութեանց ու կուսակցական մասնակի համաձայնութեանց, Սակաստայի նախարարութիւնը չկրէր ցաւ կանգուն մնալ: Գլխաւորաբար ներքին կարգ մը խնդիրնէ:

րու, ու մասնաւորապէս վատի-
կանի հետ կրօնական առկա մէկ
քանի խնդիրներու կարգադրու-
թեան վերաբերմամբ Սակաստայի
հետեւած երկգիծի, անորոշ, հա-
կասական քաղաքականութիւնը
յուսահատութեան ու դատաւար-
ութեան մղեց իր կուսակիցներէն
երկուստեալ դատաւարներ—մէկ
կողմէ Սակաստայի քաղաքակա-
նութիւնը իբր չափազանց ազա-
տասէր ու հակակղերական ամբաս-
տանդ Մօռոյի հատուածը, ու
միւս կողմէ ճիշդ հակառակ ամ-
բաստանութեամբ Սակաստան մե-
ղադրող Գանալըժայի ընկերվարա-
կան հատուածը: Այնպէս որ՝ կա-
ռավարութիւնը դադարած էր խոր
հրդարանին վրայ մեծ ազդեցու-
թիւն ունենալէ, ու ինքնին ճշգ-
ճիմ պատրուակ լը—խորհրդարա-
նէն առանց արտօնութիւն առնելու
երկու վարժարան—Նաւերու չինու-
թեան խնդիրը—վերջ տուաւ ար-
դէն անխուսափելի տապալումի մը
դատապարտուած Սակաստայի
գահճին գոյութեանը:

Իսկ Սպանիոյ նոր նախարարու-
թիւնը կազմելու պաշտօնը Ալ-
ֆօնս Գի. յանձնեց պահպանողա-
կաններու պետին՝ Մ. Սիլվէրայի
որ Գանսօլայի եղերական վախճա-
նէն ի վեր այդ կուսակցութեան ա-
մենէն հեղինակաւոր, ամենէն պեր-
ճախօս անդամներէն մէկն է:

Մ. Սիլվէրա, իբր առաջին պայ-
ման նոր նախարարութիւնը իր
կազմելուն, թագաւորէն պահան-
ջեց ու ձեռք ձգեց Սպանիական
խորհրդարանը լուծելու հրամանա-
գիր մը. Մ. Սիլվէրա լաւ կըմբռ-
նէ թէ՛ Սակաստայի գահճին տա-
պալումը յառաջ բերող դատաւի-
րապետականները ամբողջութեամբ
իր նախարարութեան հակառա-

կորդներ պիտի ըլլան. այս պատ-
ճառաւ իր առաջին գործը կըլլայ
խորհրդարանը լուծել, յուսալով
որ նոր ընտրութեանց մէջ, որոնց
երկիրը ձեռնարկելու է, իշխանու-
թեան վրայ գըտնուելու իր հան-
գամանքովը կրնայ ընտրողներու
վրայ նախնական ապօրէն բռնու-
թիւններով—որոնք Սպանիոյ մէջ
սովորական բաներ են—պահպա-
նողական մեծամասնութիւն մը
նորակազմ խորհրդարանին մէջ բե-
րել:

Անգամ մը իր ծրագրին այս ա-
ռաջին մասը յաջողցնելէ վերջ, ինչ
տոնին հանգստութեամբ պիտի
կրնայ հետամտիլ առաջը առնե-
լու ընկերվարական, հանրապե-
տական, ազատասիրական շարժ-
մանց, որոնք գոյցէ մօտ ապագա-
յի մը մէջ Սպանիան հիմնապէս
յեղաշրջեն:

Տ. Է.

ՅԱՆՑԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Է.

Գաղտնիքն երեսն կելլէ

(Շար. նախ. քիչէն եւ վերջ)

Պատճառն ի՞նչ էր որ վարդօն
կուզէր գրաւած 2,000 Փրանքս
գանձել և յընէվ դրկել (.)...

Պատճառն ի՞նչ էր որ վարդօն
կը հակառակէր ընկերական տեսան-
մը կազմելու և Առաքելը կուգար
ինձ սպառնալու և իր 2,000 Փրանքը
պահանջելու...

Պատճառն ի՞նչ էր որ վարդօն
կուգար ինծի կըսէր. «ձեռնթափ
եղիր այս խնդրէն, որովհետեւ

Դաշնակցութեան աննպաստ է»...
Պատճառն ի՞նչ էր որ Առաքելի
դրամները յանձնելէս վերջը վար-
դօն կուգար «Թանձնեցիր» ըսե-
լով զիս կը ծաղրէր. և նմանապէս
Առաքելը հեգնական կերպով կը-
սէր. «Գաղտնիքն գտար»...

Եւ վերջապէս պատճառն ի՞նչ
էր որ ինծի շնորհակալութիւն
յայտնող պիւռօն իր քննիչ Ռոս-
տօմը կը զրկէր (ինչպէս ժամանա-
կին զրկած էր Գանարեանը և Ա-
ռաքելը հարցաքննելու, այն Գա-
նարեանը որ զէնքերը օր տալ
ժախուելուն կաճապարէր) տօքիւ-
մաններ հաւաքելու և երբ նսվըս-
տահալութիւն չէի ունենար Ռոստօմի
նման կեղծ քննիչի մը վրայ, պիւ-
ռօն կ'ըսէ նամակաւ մը ինձ կըսէր.
«ապագան պիտի պարզէ թէ ո-
րոնք են անկեղծ և ճշմարիտ հայ-
րենասէրներ»:

Մեր այդ կարգ մը հարցումնե-
րու պատասխանը գտնել ընթիւ-
ցողաց կը թողուի: (*)

«Ահա այն վարդօն է որ ժողո-
վուրդի զրամով հիմնած իր թեր-
թով այդ միեւնոյն ժողովուրդի
որդիներուն տրուած չոր հացին
արգելք կըլլայ, և մէկ խօսքով
ինչ որ բարի է և օգտակար, անոր
կը հակառակի. իսկ հայ ժողո-

Տ. Ճանկիւլեան իր այս մերկացու-
ցիչ գրութեան վերջին մասով՝ զոր
չպիտի հրատարակենք, կը պատմէ թէ
վարդօն անուանեալ ինկած մօրդուկը
ինչ ցած միջոցներու դիմած է արգի-
լելու համար Հայաստանի սովորոց
նպաստելու նպատակաւ կազմուելիք
երեկոյթը, եւ ինչ դուրս լարած է
տապալելու համար Որբախնամ Ընկե-
րութիւնը: Վերջապէս Տ. Ճանկիւլեան
սա վերջի երկու պարբերութիւնով կը
գոցէ գրութիւնը:

Ի. Խ.

վարդը այդպիսի փնտցած անբա-
րոյական մարդուկ մը խմբագիր
նկատելով, անոր մրտադրեան
ենթակայ այդ թերթը դեռ կը
պահէ հրապարակի վրայ:

Թանցանքը որո՞ւն է:

«Թանցանքը ամբողջ հայ ժողո-
վուրդինն չէ, այլ թուի և որակի
տեսակէտով այն աննշան խմբակինն
է որ դեռ կոյր և խուլ մնալով կը
հետեւի վարդօնին, և սա այնպի-
սիները իր շուրջ տեսնելով կը
յանդգնի թրքահայերը «էջ» ան-
ուանել. այսինքն միայն իր շուրջը
հաւաքուողները, իր սուտերը իր
խաբէութիւնները կ'ընդունեն ան-
շուշտ»:

Յ. Կ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ

Յ. ՉԱՅԻՐԵԱՆԻ ՇԻՐԻՄԸ

Վաղեմի յեղափոխական ծանօթ
գործիչ հանգուցեալ Թարութիւն
Չապրեանի չիրիմը կառուցանելու,
և բոլորտիքը երկաթէ վանդակա-
պատով մը շրջափակելու համար,
ժամանակին վստահելի անձերէ
յանձնախուսմը մը կազմուած էր:

Սակայն չգիտցուի թէ, ի՞նչ է
պատճառը որ յանձնախուսմը մի-
այն այդ չիրիմը կառուցանել տա-
լով իր պաշտօնը աւարտած կը
սեպէ. որովհետեւ, այն օրէն մին-
չեւ այսօր գրիթէ երկու տարին
լրացած է ու բնաւ ձայն-ձուն ե-
լած չէ, վանդակապատի չինու-
թեան մասին. կերելի թէ յիշեալ
յանձնախուսմբ յարգելի անդամ
ները իրենց խոստումը մոռցած
են:

Պուզրէշի գաղթականութիւնս
աղգին ճշմարիտ գործիչները պատ-
ուելը արդէն իրեն նոյրական
պարտք մը սեպած ըլլալով, այսօր

Ա. ԵՐԵՄԵԱՆԵԱՆ

(37)

ԹԻՍՊԱՐՏԸ

ՄԵԱՆ ԵՐՐԱՐԴ

ԼՈՒՍՈՒՄ ԵՒ ՎԱՆԱՎԱՆ

— Քանի որ այդպէս է, ի՞նչու ձեռնպահ կը
մնաք: Արդէն մեր նպատակը խամբաներու պաշտ-
պանութիւնը չէ: Սամբաները պաշտպանուած են
կառավարութեան դրօշին տակ: Մենք տառապող,
չարչարող ու օր մը անօթի, օր մը կուշտ կեանք
անցունող սա գեղացիներու համար միջոց մը մտա-
ծել կուզենք: Ահա՛ մեր խնդիրը...

Պողոս Եպիսկոպոսը պահ մը լռեց: Իր լայն ճակ-
տին վրայ դրաւ ձեռքը՝ կարծես ամփոփելու համար
գանկին ներքեւ վճիռացող գաղափարները: Յետոյ
իբր գէմը գտնուող հսկայ ու համարձակախօս մար-
դուն վրայ նայեցաւ, որուն աչքերու մէջ բոց մը
կը ճառագայթէր: Դիտեց անոր պատկանելի կեր-
պարները ու հարցուց.

— Ի՞նչ կուզէք որ ընէ ձեռքերը կապուած Եպիս-
կոպոս մը:

— Ձեր ձեռքերը կապուած չեն, առարկեց Ներ-
սէս Արծրունին:

— Այո կղզիին մէջ:

— Այո՛, այս կղզիին մէջ:

— Կը սխալիք: Այս մեռաւորիկ ընտելութեանս
մէջ ձեռքէս բան մը չգար: Միթէ՞ չէք հաւատար,
երբ ըսեմ թէ բանտարկութիւն մըն է այս ինծի
համար:

— Ի՞նչու բանտարկութիւն մը ըլլայ:

— Որովհետեւ այն ազդեցութիւնը զոր ես ունէի
Առաջնորդական գահին վրայ, հիմակ իսպառ ջըն-
ջուած է: Ան ատեն ո՛չ միայն քուրտ-պէկերը կը
զողային իմ անունէս, այլ կառավարութիւնն ան-
գամ չէր կրնար անիրաւ բան մը ընել սա գեղացի-
ներուն դէմ, զոր ամենէն աւելի սիրած եմ բո-
վանդակ կեանքին մէջ: Ե՛հ, չար նախանձը սատա-
նայի մը պէս կերաւ թշնամիներու սիրտը: Չբաշխ-
ցի՛ն... չուզեցին իմ ձեռքովս բարութիւնը տես-
նել: Ականջովս լսած եմ, երբ կը պողոտային չորս
կողմէն. «Դաւաճան է Պողոս Եպիսկոպոսը... մատ-
նիչ է... կառավարութեան մարդն է...»: Լսած
եմ, այո՛, եւ հաւատացէք որ սրտէս արիւն գա-
ցած է:

— Հոգ չէ՛, Սրբազան Հայր, Քրիստոսին ան-
գամ «վատ մարդ է» ըսին... բայց Անիկա իր ձեռքը
բարութիւն ընելէ չգաղղեցուց: Մինչեւ իսկ իմ չին
վրայ, մահուան ամենէն դառն ճղնաժամը հասած,
չմոռցաւ ըսելու. «Իմ ոճրագործներս մեղաւոր չեն,
որովհետեւ չեն գիտեր ըրածնին»:

— Իրաւունք ունիք... բայց մարդս մարդ է,
չկրնար Աստուած մը ըլլալ, առարկեց Վանա-

հայրը՝ ցաւատանջ ձայնով մը: Մանաւանդ ի՞նչ
կրնամ ընել, երբոր բարիքս՝ չարիքի տեղ պիտի
դնեն:

— Ձեր Սրբազնութիւնը բարիք մը պիտի ընէ
այնպիսի՝ մարդերու աջին, որոնք կը գնահատեն
զայն:

— Որո՞նց առջին:

— Մե՛ք...

— Ձե՛ք...

— Այո՛:

— Ձեմ հասկնար... ո՞վ էք դուք:

— Հայրենեաց ու Աղգին պաշտպաններն ենք:

— Հայրենեաց ու Աղգին պաշտպաններ...:

— Այո՛:

— Դուք ի՞նչ կարող էք ընել:

— Կը հաւատա՞ք որ անձնու իրութիւնը ամեն բան
կրնէ:

— Կը հաւատամ:

— Աւրին մեր յոյսը լոկ անձնու իրութեան վրայ
զրած ենք:

— Միայն անձնու իրութիւնն է...

— Այո՛, միայն անձնու իրութիւնը...

— Ըստ իս, ներկայ ժամանակներու մէջ, անձ-
նութիւն թեան հետ մեծ ուժ մըն ալ հարկաւոր է:
Ունի՞ք ուժեղ կազմակերպութիւն մը:

— Ահա՛ այդ է մեր բոլոր ջանքը: Այդ է պատ-
ճառը՝ որ Ձեր Սրբազնութեան կը դիմենք: Ուժեղ
կազմակերպութիւն մը պատրաստելու համար, միթէ՞
հիմնական ծրագիր մը պէտք չէ՛:

— Անշուշտ, առանց հիմնական ծրագրի մը՝ գոր-
ծունէութիւնը խախտաւ ու երկիւղալի կըլլայ:

միածնի կտակեր է։ Յիշեալը իր երկար տքնութեանց արգիւնք ու հայ լեզուն օտար լեզուններու հետ բաղդատութեան գնող հեղինակութիւն մը, տպագրելու առաջարկութեամբ, Պատրիարքարան զրկած էր և 4000 րուպլի յատկացուցած տպագրական ծախքի համար։

— Հայ բարեսէր մը՝ որ իր անունը չուզեր յայտնել, 4000 ոսկի տրամադրելի բրած է Պոլսոյ խասգիւղի Գալֆանեան որդանոցին նուրգութեան համար։

— Սուլթանի խրատի Շէրիֆը համբարեցու երթալուն առթիւ, Պոլսոյ կեդր. վարժարանին եւ Ս. Փրկչի աշակերտներուն կողմէ ուղերձներ մատուցուած են։

— Ռուսներէ Դեկտ. 6 թուով մեզ կը գրեն. «Երէկ Արտաշէս Ասլանեանը թիմուրեանին գլխուն զարկած է պոքսով, Դաշնակցութեան դրամ տուած Բրախուն համար։

Ի Խ Թ Ա Ր

Կապէրա պետէրէի էրան Խոտեմէնի օլան ապօնէրիսիսիսիս պիլա քէնիսիս պօրաշարքը կեօնտէրէրիս քէնա օլընըր։

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սուլթան՝ մէօթատը իւզրէ, խըրգաի Շէրիֆի էօրմէք թէհի-քէսիսիս պու սէնէ տէ կէշիսիս։ Սէրայտան ալթը աթըլը ֆայթօնա րադիպէն, շահգատէ Պիրհանէտտին էֆէնտիի վէ սէրադքէրի գարշը-րէնա ալուպ, Եէնի-Եօլտան Օր-թա-Քէօյ թարիգի իլէ Բաշա իս-բէլէսիսէ էնէր, օրատա միւնթ-հազըր օլան թէշիքիսիս վարօրը-նա բիւնէրէք սաաթ 7ի 20 կէշէ-րէք Թօրգաբու րընթըմընա վա-սըլ օլուր վէ Երլուրըր գարու սահիլինտէն թէքրար ֆայթօնա րտգիպէն իւշիւնիս գարու նա մահէլէ Եէթիսիս։ Պուրատան իւ-րիլէրէք Պաղտատ քէօշիսիս կի-տէր. օրատա պիրազ տիւկէնտիք, տէն սօնրա խըրգաի Շէրիֆին պուլընտըր տարիէյէ կիտէրէք իլթիս նամազ իտէր վէ քէնտի էլի իլէ խըրգաի էօրտիքտէն սօնրա, իւլէմա, վիւզէրա վէ վիւ-քէլայա տախի էօրմէկէ մէգուլի-յէթ վէրիս. պիւլայ օրատա եիւ-զէրէրի Եազըր պիւրէր մէնտիլ ա-լըրլար։

Նամազտան վէ տուալարտան սօնրա Բատիշահ թէքրար կիթ-միշ օլտըրը Եօլլէ Երլուրըր ալտէթ իտէր, Շու սէյահաթը սաղ սէլիմ իլթա ու իճրա իտէպիլմիշ օլտը-ղընտան տօլալը նէ՝ տէրէնէ մէս-րուր օլտըրը թարիֆ իսթէմէզ, Եօլ պօլլարընտա գաթ գաթ տի-գիլմիշ օլան սաքէրէր վէ հաֆ-թալարտան պէրու թէլաշ ու տըգ-գաթտա պուլընա խաֆիլէր

չու խըրգաի Շէրիֆի զիյարէթ պէլաթընտան «չօգ չիւքիւր գուր-թարտըր» տէմէքտէ իսիլլէր։

— Մաքէթէնիա իսլահաթը ի-չիւն ի՛կիլիս էլիսի Սատրազամա մէմուրիլէթ պէյան իթտի, վէ պու քիֆայէթսիլ իսլահաթըն պա-րի ճիտ ու սուրէթտէ իճրա իտիլ-մէսիսի թէսպիլէ էլլէտի։

— Պապը Ալի Պէօլիւք տէվլէթ-լէրէ խիթապ ումուս պիր պէյան. նամէ գալէմէ ալմագտա ըմըշ. իշ-պու պէյաննամէ իլէ Մաքէթէնիա իլլէրինէ տարի քէնտի նօգթաի նազարիլէսիսի (տեսակէտ) պէյաթլէ էլլէրինէ էֆբարլարընա գարշը միւտաֆաթտա պուլընաճաֆ օլ-տըրը Սթանպուլտան թաւնա իիւ-պար օլընմըշ տըր։

— Տամատ Մահմուտ բաշանըն իքի մախտուլարը իլէ պէրապէր նէտամէթլէ թիւրքիայա տպէթ իթմէք արզուլարընա րահմէն աֆ-վը շահանէ սուտուր իթմիշ վէ ֆա-գաթ բաշաի մուսաիլէյիս խասթա-լըրը սէպէպի իլէ պու մէգուլի-յէթտէն իսթիֆատէ իտէմէմիշ տէյու. Բարիս թիւրք սէֆարէթի իլան իթմիշ իտի։

Մահմուտ բաշա էլլինիս պու-րէսիս Եալանը իքրահէն թէքգիպէ քէնտիսիսիս ալա թիւրքիայա կիթմէք արզուլարտա պուլընա-տըրընը, վէ աքսի օլարագ չօգ տէֆալար պու պսպտէ սէֆարէթ-տէն քէնտիլէրինէ օլան թէքիֆ-լէրի րէտտ իթտիլինի պէյանտան սօնրա, «տէվլէթլէրին թէնտիպի ու թալիսիլէսի իւզրէ, թիւրքիա-տա իսլահաթ իճրա օլընմադըճա օրայա կիթմէքտէն իսէ խարիճտէ էօլմէմի միւրահաճաճ ատտ իտէրիս» տէմիշ տիր։

— Լօնտրայա Եէնի օսմանլը էլ-չիսի թային օլընան Միւզիլիս պէյ՝ սապըգ Լօնտրա էլլիսի Գօս. թա Միւզիլիս բաշանըն մախ-տուլը տըր. պու գաթ պուլնտան էվվէլ Բօմա էլլիլիկիստէ պուլըն-լըրընտան մատա Սիսամ պէյի-կիսէ թային օլընմըշ ըմը։

— Հակի Սերպիտաա զուհուրի-տէն իսթիլալաթ սէպէպի իլէ Սերպիտաա գաշմըշ վ միւրիս սայիլմըշ օլան պաղը խիսթիւն-լար աֆվա նայիլ օլուպ քէօլլէրինէ տպէթ իթմիշ օլտըրըրը Սթան. պօլ կապէթալարը Եազըրլար։

ԲՈՒՍԻԱ ՎԷ ՊԱԼԵՍՏԻՆ ԵՅԱԼԵԹԻԼԵՐԻ

Բէթրապուրկտա նէշը օլընան Բուս տէօվլէթիսիս րէսմի կազէ-թաալ պիր պէյաննամէի րէսմի նէշը իթմիշ տիր։ Իշպու պէյան-նամէ՝ Պալգան էլալէթիստէ իիւ-թիլալը թէսքիս իթմէք վէ թէք-րար իլք պահարտա ումուս գարը-շըգըրա մէյտան վէրմէմէք վէ Սլաւ միլլէթլէրին միւթէգաբուր օլմալարընըն Եօնիսիս ալմագ ի-չիւն, Բուսիս հիշ պիր վագըթ սէյիւրիսթիսթը իլէ գալմատըրը

կիպի, Եիսէ թիւրք հիւքիւմէթիսէ լազըմ կէլէն միւրահաթը իթմիշ օլտըրընը սէօլլէյօր. վէ շէօլլէ տէ-վալ իտէյօր։

«Ասայիշին իպգասը իչիւն էն էվվէլ Մաքէթէնիա գօմիթլէրին հարէքտէթընը մէնն իթմէլի. զի-րա պու գօմիթլէր վաթանա խըտ-մէթ իթմէյուպ էհալիի իշինտէն կէրի պըրագալարա անը ֆէնա թա-րիգէ սէվգ իտէյօրլար։

«Բուսիս չօգ տէֆա Մաքէթ-նիա մէսէլէսի իչիւն քէնտի էֆ-քետըրը պէյան իթմիշ տիր։ Սլաւ միլլէթլէրին ուլլուրընը հա-րէքէթլէրլէ Պալգան նիմ ճէգիլէ-սիստէ տէօվլէթլէրտէն թէմին օ-լընան հալը հազըրը թաղիլի իթ-մէկէ չալըշմալարընա Բուսիս մու-խալիֆ պուլընմըշ տըր։

«Բուսիս չիմտի տախի օ՛ էֆ-քետրտա տըր, վէ պուլնու իչիւն սըրպ վէ պուլկար հիւքիւմէթլէ-րինի՝ ասըլ քէնտի մէնֆատթլարը-նըն մուհաֆազալար իչիւն օ Եօլտա գարըշըրըրլարը մէնն իթմէկէ տալէթ իտէճէք տիր։

«Պալգանլարտա հէր նէվ թէհ-լիքէնիս Եօնիսիս ալմագ իչիւն Բուսիս քէնտի գարարը գաթի սիսի էվվէլտէն պէրու վէրմիշ օ-լուպ, անըն շու գարարը հէր թա-րաֆտան թագաթիլ օլընմըշ տըր։

«Աստրիանըն տախի քէնտի Սթանպուլ էլլիսիս թալիսաթ վէր-մէսի լազըմ տըր քի՝ պու րուս էլ-չիսի իլէ պիլ միւզէքէրէ՝ Պապը Ալիյէ պէրապէր միւրահաթլէ Մաքէթէնիա տա իսլահաթըն պի-լաթէլիսի իճրա օլընմալընը իգ-թիպասըն անլաթսընլար։

«Շարգտա սուլհըն մուհաֆա-զասընտա էն չօգ մէնֆատթլարը օլան պու իքի գօմուս տէօվլէթլէր տիր. անլէրին պիրլիքտէ զօլլէթ-թի՝ 1897տէ պէյիլլէրինտէ միւ-նագտ օլան մուգալլէլէնիս իճրասը տէմէք օլաճագ տըր. պուլնուլէ տէ՝ Պալգան իչիւն ահտնամէլէրլէ գարարկիր օլան հալը հազըրը մուհաֆազա իթմէք մէպտէսիսէ խըտմէթ իտիլմիշ օլուր, Եանի ա-սայիշի մուհաֆազա իթմէքլէ խիսթիսիս էհալիի վէ նիհայէթ սուլհը ումուսիս հըֆլ իթմիշ օ-լուրըրը»։

Իշպու պէյաննամէ Սուլթանըն տըգգաթընը տալէթ իտէն պիր գաշ սէօլլէրլէ խիթամ պուլուպ, Բուսիսանըն տօսթանէ սուրէթտէ իթմիշ օլտըրը նասահաթլարը Սուլ-թան թագաթիլ իտէպիլէճէկիսի վէ հէր նէվ ուլլուրընըրըրլարըն էօ-նիսիս ալմագ իչիւն լազըմ կէլէն թէպալիլէրի իթթիլալ իտէճէ-կիսի վէ Մաքէթէնիա տա խիս-թիսիս էհալիսիս իսթրահաթընը թէմին էլլէյէճէկիսի (·) Եազըրլար։

ՏՕԽԻԼԻՑԷ

Տիւն Այ Եիքուս Եօրթուր օլ-տըրընտան Չարըն տախի իսմի

կիւնիւ օլմասը մինասիպէթլէ՝ շէհ-րիմիզ պէլէտիլէ մէյտանընտա շէն-լինքլէր իճրա օլընտը, ֆիշէնքլէր աթըրալ, միւզիգա թէրէնիս իթտի վէ ալալլէ րուս գօնսօլու-հանէսիսէ կիտիլուպ «հուրա» նի-տալարը իլէ պուլկար միլլէթի Չա-րըն իսմիսի թէպիլգ իթմիշ օլ-տու։

Ա Ի Ս Տ Ր Ի Ա

Իմբերաթօր Ֆրանց Եօգէֆ քէն-տի պիր րէսմիսի Ալմանիա վիւ-քէլա րէլիսի գօնթ Պիւլովա իհտա իթմիշ տիր. Իմբերաթօրըն պու հէտիլէսի իթթիլալ միւսէլլէ-սիսիս Եէնիլէնմէսի իչիւն Պիւլ-վըն իպրապ իթտիկի սայ ու զայ-րէթիսէ իիւքտաֆաթէն վէ իլմիշ տիր։

— Բուս խարիճիլ նազըրը գօնթ Լամատօրֆին Եազընտա վիւննայա կիտէճէկի ճէրիտէլէր Եազըրլար։

ՄԻԻԹԷՆԷՎԼԻՑԷ

Սիան վէլիսհոր ախիլէն Այն-րիկայա կիթմէսիստէ պիր շան-թէօզ գըզա սէվտալանմըշ օլուպ, իգտիլաճ իթմէք վատը իլէ անը Գաադիպ էլլէմէքտէ օլտըրընը ին-կիլիզ կապէթալարը Եազըրլար։

— Վէնէցուէլանըն Բիւրթօ-Գապէլլօ գալէսի ինկիլիզ վէ Ալ-մանիա հարպ վարօրլարընտան թօ-բա թուլթուլը. գալէտէն մուգա-վէմէթ օլընտը իտէտէ չապուգ մաղուպ օլտըրլար. ինկիլիզ պահ-րիէ տաքէրլէրի գարայա չըգուպ գալէնիս հիսարլարընը Եըգարագ գալթ իթտիլէր. Շէհիլէ գարար վէրիլմէտի։

ՍՐԱՀ "ՍԱՆԴՐՈՒՆ"

Այս գիշեր Նահեճսա խմբին կող-մանէ պիտի ներկայացուի ըստ խնդ-րանաց թատեսիրաց ՀՍԱԼԷԹ ողբեր-գութիւնը 5 արար։

"ՎԱՋԳԷՆ, ԵՐԳԱՐԱՆ

600 երեսէ բաղկացած, 300էն ա-ւելի երգեր, նշանաւոր գործիչներու կենսագրութիւններ ու լուսանկարներ կը պարուստէ իր մէջ։

Գոյացած հասոյթը յատկացուած է զուտ բարեսիրական գործի մը։

Ամէն դասակարգին գիւրմատչելի ըլլալու համար որոշուած է ծախուիլ 5 ֆրանքի. Դիմել առ 5—16

Յ. Կ. Ճանկիլչեան (Պուլկարիա) Վառնա

ՆՈՐ ԳԻՆԵՏՈՒՆ

Վարդան չալուշ Պետրոսեան եւ Պօղոս Չալուշեան բացած են քա-ղաքիս նախկին գօրանոցի գիմացը գինեւուն մը, եւ յարգոյ հասարա-կութեան կը յայտարարեն թէ այս նոր հաստատութեան մէջ կը գտնուին զուտ խաղիլի օղի, ընտիր գինի եւ ուրիշ ամէն տեսակ ըմպելիներ, մաքրու-թեան հոգ կը տարուի։ Տան համար գնողներուն գոհացուցիլ զեղչ։

Одговорникъ Н. Драгулевъ
Меч. на Хр. Н. Войниковъ—Варна